Medi-Cal General Property Limitations-ը
այն անձանց համար, որոնք չեն բավարարում իրենց
Modified Adjusted Gross Income-ն օգտագործելու պայմանները

«Medi-Cal»-ը հաշվի չի առնում այն անձանց սեփականությունը, որոնք իրավունակ են ծրագրի համար՝ հիմնված իրենց Modified Adjusted Gross Income-ի (MAGI)վրա:Հարցրեք Ձեր իրավունակության հարցերով աշխատակցին, թե արդյոք Դուք իրավունակ եք «Medi-Cal»-ի համար՝ MAGI-ի կանոններով: Եթե չեք դիմել, կարող եք դիմել ստորև նշված եղանակներից մեկի օգնությամբ.

- Ձեր շրջանի առողջապահության և հանրային ծառայությունների դեպարտամենտի միջոցով: Ձեր տեղական շրջանային գրասենյակի մասին տեղեկությունները կգտնեք այցելելով http://dhcs.ca.gov/COL: Կամ զանգահարեք «Medi-Cal»-ի օգնության հեռախոսագիծ՝ (800) 541-5555 համարով:
- Առցանց՝ այցելելով www.CoveredCA.com
- Հեռախոսով՝ զանգահարելով **1-800-300-1506**

Այս ծանուցումը բացատրում է «Medi-Cal»-ի **պահանջները սեփականության նկատմամբ**՝ «Medi-Cal»-ի բոլոր այն դիմորդների և նպաստառուների համար, որոնք **չեն** բավարարում MAGI-ից օգտվելու չափանիշները: Ձեզ հարկավոր է իմանալ հետևյալ բառերի նշանակությունը.

- **Սեփականությունը** ներառում է ինչպես **անշարժ** գույքը**,** այնպես էլ **անձնական** գույքը
- **Անշարժ** գույքը հողն է, շինությունները, շարժական տները, որոնք հարկվում են որպես անշարժ գույք, ցկյանս գույքը՝ անշարժ գույքի տեսքով, հիպոթեքները, մուրհակները և լիազորագրերը
- **Անձնական** գույքը լիկվիդային (դյուրիրաց) և ոչ լիկվիդային ունեցվածքն է: Դրա մեջ են մտնում ավտոմեքենաները, արդուզարդեղենը, արժետոմսերը, պարտատոմսերը, հաշիվները ֆինանսական հաստատություններում, նավակները, բեռնատարները, կցասայլերը և այլն:
- **Հաշվառելի** սեփականությունն այն անշարժ և անձնական գույքն է, որը հաշվի է առնվում՝ իրավունակությունը որոշելու համար
- **Ազատված** կամ **ոչ առկա** սեփականությունն այն անշարժ կամ անձնական գույքն է, որը հաշվի **չի** առնվում՝ իրավունակությունը որոշելու համար

- **Սեփականության պահուստն** այն հաշվառելի սեփականությունն է, որն ազատված **չէ** կամ առկա չէ
- **Սեփականության պահուստի սահմանաչափերը** հաշվառելի սեփականության այն ընդհանուր գումարներն են, որոնք թույլատրված է ունենալ

«Medi-Cal»-ի իրավունակություն ունենալու համար՝ Ձեր ընդհանուր հաշվառելի սեփականությունը չպետք է գերազանցի սեփականության պահուստի հետևյալ սահմանաչափերը՝ հաշվարկված ըստ այն անձանց թվի, որոնց սեփականությունը հաշվի է առնվում՝

Անձանց թիվը	**Սեփականությանսահմանաչափը**
1	$130,000
2	$195,000
3	$260,000
4	$325,000
5	$390,000
6	$455,000
7	$520,000
8	$585,000
9	$650,000
10 կամ ավելի	$715,000

Ծանոթություն. Երբ ամուսիններից մեկը հաստատությունում է գտնվում, իսկ մյուսը համայնքում է (տանն է ապրում), թույլատրվում է հաշվառելի սեփականության լրացուցիչ գումար ավելացնել: Ցանկացած արժողության արդուզարդեղենն ազատված է: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք 3-րդ էջը:

Ձեր հաշվառելի սեփականությունը **չպետք** է գերազանցի սեփականության պահուստի սահմանաչափը: Այդ սահմանաչափը գերազանցող ցանկացած գումար Ձեզ և/կամ Ձեր ընտանիքին **անիրավունակ** կդարձնի «Medi-Cal»-ի համար:

«Medi-Cal»-ի պահանջները բավարարելու համար Դուք կարող եք նախքան այն ամսվա վերջը, որի ընթացքում դիմելու եք «Medi-Cal»-ի համար, կրճատել Ձեր սեփականությունը մինչև սեփականության պահուստի սահմանաչափը: Եթե Ձեր դիմելու ամսում չեք կարող կրճատել Ձեր սեփականությունը մինչև սեփականության սահմանաչափը, կարդացեք **«Բացառություն՝Principe v. Belshé»** բաժինը՝ 8-րդ էջում:

<u>Ազատված սեփականությունը</u>

(Այն սեփականությունը որը հաշվի **չի** առնվում «Medi-Cal»-ի

իրավունակությունը որոշելիս)

Անշարժ գույք

- **Հիմնական բնակության վայրը** (այն սեփականությունը, որ որպես **տուն** է ծառայում)
  - Երբ դիմորդը կամ նպաստառուն որևէ պատճառով բացակայում է տնից, այդ թվում՝ գտնվում է հաստատությունում, տունն ազատվում է հաշվառումից այն դեպքում, եթե դիմորդը կամ նպաստառուն մտադիր է մի օր վերադառնալ այդ տունը:
  - Տունն ազատվում է նաև այն դեպքում, եթե դիմորդի կամ նպաստառուի կինը/ամուսինը կամ նրա խնամքի տակ գտնվող որևէ ազգական շարունակում է ապրել այդ տանը:
  - Այդ տան վաճառքից ստացված գումարը կարող է 6 ամսով ազատվել հաշվառումից, եթե այդ գումարն օգտագործվելու է մեկ այլ տուն գնելու նպատակով:
- **Այլ անշարժ գույք**
  - Սեփական միջոցների մինչև $6,000 արժողությամբ ոչ գործարարական նպատակներով օգտագործվող անշարժ գույք (տնից տարբեր), հիպոթեք, լիազորագրեր կամ այլ մուրհակներ:
  - Այս պայմանով հաշվառումից ազատվելու դեպքում՝ սեփականությունը պետք է տվյալ գույքի զուտ շուկայական արժեքի կամ ընթացիկ անվանական արժեքի 6 տոկոսի չափով տարեկան եկամուտ բերի:
- **Գործարարական կամ առևտրի նպատակով օգտագործվող անշարժ գույք**
  - Առևտրի կամ գործարարական նպատակներով օգտագործվող անշարժ գույքն ազատվում է՝ անկախ դրամասնաբաժնից և այն բանից, թե արդյոք եկամուտ է բերում:
  - Որոշ դեպքերում ազատման այս պայմանը տարածվում է նաև վարձակալությամբ տրվող սեփականության վրա:

Անձնական գույք

- **Մեկ ավտոմեքենա**
- **Առևտրի կամ գործարարական նպատակներով օգտագործվող անձնական գույք**
- **Անձնական իրեր**, այդ թվում՝ հագուստ, ժառանգվածընտանեկան իրեր, ամուսնական և նշանադրության մատանիներ և այլ արդուզարդեղեն
- **Տնային կահկարասի կամ իրեղեն**
- **IRA-ներ, KEOGH-ներ և աշխատանքի հետ կապված այլ կենսաթոշակային ծրագրեր**

  - Այս գումարներն ազատվում են այն դեպքում, եթե ընտանիքի անդամը, որի անունով դրանք պահվում են, «Medi-Cal» **չի** ուզում:
  - Եթե գումարը մեկի անունով է պահվում, որը ցանկանում է «Medi-Cal» և ստանում է հիմնական վճարումներն ու տոկոսները, ապա հաշվեկշիռը հասանելի չէ և հաշվի **չի** առնվում:
- Թաղման համար անշեղարկելի հիմնադրամ կամ թաղման համար նախապես վճարված անշեղարկելի պայմանագիր
- **Թաղման համար պահ տրված մեկ չեղարկելի հիմնադրամ կամ թաղման համար նախապես վճարված չեղարկելի պայմանագիր**՝ մինչև $1,500 արժողությամբ, և կուտակված տոկոս՝ յուրաքանչյուր անձի համար:
- **Թաղման տարածքի առարկաներ**
- **Երաժշտական գործիքներ**
- **Ժամանցի առարկաներ**, այդ թվում՝ հեռուստացույցներ, էլեկտրոնային սարքեր, համակարգիչներ, հրացաններ, հավաքածուներ և այլն
- **Անասուններ, ընտանի թռչուններ կամ մշակաբույսեր**
- **Նահանգի կողմից հավաստագրված երկարատև խնամքի որևէ ապահովագրական պայմանագրով տրամադրվող նպաստի գումարին հավասար հաշվառելի սեփականություն**
- **Կյանքի ապահովագրության պայմանագրեր**
  - Յուրաքանչյուր անձ կարող է $1,500 համակցված անվանական արժեքի չափով կամ դրանից պակաս արժողությամբ՝ կյանքի ապահովագրության պայմանագիր ունենալ:

<u>Երկարատև խնամքի հաստատություն ընդունվող կամ դրանում ապրող այն անձանց սեփականության սահմանաչափերը, որոնք չեն բավարարում MAGI-ի պայմանները</u>

Եթե Դուք <u>ամուսնացած չեք</u> և ապրում եք երկարատև խնամքի հաստատությունում.
Ձեր սեփականության պահուստը պետք է լինի $130,000 կամ դրանից քիչ:

Եթե Դուք <u>ամուսնացած եք</u> և <u>երկու ամուսիններով էլ</u> ապրում եք երկարատև խնամքի հաստատությունում, ու Ձեզնից ոչ մեկը նախկինում չի դիմել «Medi-Cal»-ի համար.

- Ձեր առանձին սեփականությունը և համատեղ սեփականության կեսը պետք է գնահատվի $130,000 կամ ավելի պակաս:

- «Medi-Cal»-ի համար չդիմող Ձեր կինը/ամուսինը կարող է պահել իր ամբողջ առանձին սեփականությունը և համատեղ սեփականության կեսը: Հնարավոր է, որ Դուք կարողանաք արագացնել «Medi-Cal»-ի իրավունակություն ստանալը, եթե Դուք և Ձեր կինը/ամուսինը համաձայնեք բաժանել համատեղ սեփականությունը: Նախքան այս տեսակի համաձայնություն ստորագրելը՝ Դուք պետք է խորհրդակցեք այնպիսի մի փաստաբանի հետ, որը ծանոթ է «Medi-Cal» ծրագրին:

Եթե <u>Դուք ամուսնացած եք</u>, և <u>Դուք</u> ընդունվում եք երկարատև խնամքի հաստատություն.

- Եթե Դուք առնվազն **30** օր անընդմեջ մնալու եք, և Ձեր կինը/ամուսինը համայնքում է ապրում, նա կարող է որոշակի քանակի համակցված համատեղ և առանձին սեփականություն պահել: Այդ գումարը կոչվում է «Community Spouse Resource Allowance»(CSRA):
- CSRA-ը հաշվարկվում է ելնելով այն օրվանից, երբ Դուք դիմել եք «Medi-Cal»-ի համար:
- Ամեն տարի հունվարի 1-ին CSRA-ը բարձրանում է: Դուք կարող եք գտնել այն «Department of Health Care Services»-ի կայքում: 2022 թվականի CSRA-ը սահմանվել է $137,400:
- Հաստատությունում գտնվող կինը/ամուսինը (այն կինը/ամուսինը, որը երկարատև խնամքի հաստատությունում է գտնվում) կարող է մինչև $130,000 ավելացված հաշվառելի սեփականություն պահել:
- CSRA-ի սահմանաչափը կարող է ավելացվել, եթե համայնքում բնակվող կնոջը/ամուսնուն **դատարանի որոշմամբ** ապրուստադրամ է նշանակվում, կամ **անկողմնակալ դատալսումը** վճռում է, որ ստորև նշված **երկու պայմաններն էլ** բավարարված են.
  Ա. Սեփականության ավելի մեծ գումար է անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի ավելի շատ եկամուտ ստանալ և համայնքում բնակվող կնոջ/ամուսնու եկամուտը բարձրացնել մինչև minimum monthly maintenance needs allowance(MMMNA):
  - 2022 թվականին MMMNA-ը կազմում է ամսական $3,435:
  - MMMNA-ն ամեն տարի փոփոխվում է. այն կարելի է գտնել «Department of Health Care Services»-ի կայքում:

  Բ. Եթե ավելի մեծ եկամուտ է անհրաժեշտ՝ բացառիկ հանգամանքների պատճառով, որոնք նյութական դժվարություններ են հարուցում:

Ծանոթություն: Քանի որ այս կանոններն ազդում են այն բանի վրա, թե համայնքում ապրող ամուսինը որքան գումար կարող է պահել, որպեսզի

հաստատությունում գտնվող ամուսինն իրավունակ լինի «Medi-Cal»-ի համար, խորհուրդ ենք տալիս այդ հարցով խորհրդակցել տարեց անձանց իրավաբանական ծառայություն տրամադրող որևէ ծրագրի հետ՝ Ձեր բնակության տարածքում: Կամ, իմանալու համար, թե ինչպես է այս օրենքն ազդում Ձեզ վրա, խորհրդակցեք այնպիսի մի փաստաբանի հետ, որը ծանոթ է «Medi-Cal» ծրագրին:

Գնահատումը

Հաստատությունում գտնվող անձը կամ նրա կինը/ամուսինը կարող է խնդրել սեփականության գնահատում կատարել՝ անգամ այն դեպքում, եթե հաստատությունում գտնվող անձը չի դիմում «Medi-Cal»-ի համար: Անհրաժեշտ կլինի ժամադրություն ստանալ շրջանի սոցիալական ծառայությունների առողջապահության և հանրային ծառայությունների դեպարտամենտում: Ձեր տեղական շրջանային գրասենյակի մասին տեղեկությունները կգտնեք այցելելով http://dhcs.ca.gov/COL:

Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր ամբողջ անշարժ և անձնական գույքի արժեքների ապացույցներ ներկայացնել: Ապացույց կարող են հանդիսանալ շրջանի կողմից կատարված հարկային գնահատումները, ընթացիկ և խնայողական հաշիվների քաղվածքները, դատարանի որոշումները, միջնորդավճարային հաշիվների քաղվածքները, կյանքի ապահովագրության պայմանագրերը, տարեվճարների մասին պայմանագրերը, խնամառու հաշիվների փաստաթղթերը, համաձայնագրերը, վարձակալության պայմանագրերը, ցկյանս գույքի փաստաթղթերը և/կամ ֆինանսական հաստատությունների համապատասխան աշխատակիցների կողմից տրված փաստաթղթերը Ձեր կամ Ձեր կնոջ/ամուսնու սեփականությունը հանդիսացող որևէ անշարժ կամ անձնական գույքի արժեքի մասին:

Սեփականության կրճատումը մինչև սեփականության սահմանաչափը

Նախքան որևէ ամսվա համար «Medi-Cal»-ը կհաստատվի, մինչև այդ ամսվա վերջը սեփականության պահուստը պետք է կրճատվի և հասցվի սեփականության սահմանաչափին կամ դրանից պակաս:

ըևՈէ ամսում «Medi-Cal»-ի իրավունակությունը կարող է հաստատվել միայն այն դեպքում, եթե տվյալ ամսվա ընթացքում որևէ պահի հաշվառելի եկամուտը սեփականության սահմանաչափից ցածր լինի: Եթե Ձեր դիմելու ամսում չեք կարող կրճատել Ձեր սեփականությունը մինչև սեփականության սահմանաչափը, կարդացեք **«Բացառություն՝Principe v. Belshé»** բաժինը՝ 8-րդ էջում:

Օրինակներ

- Եթե «Medi-Cal»-ի դիմորդի՝ հաշվառումից չազատված ընդհանուր սեփականությունը խնայողական հաշիվ է, որն ամսվա ընթացքում $200,000 հաշվեկշիռ ունի, նա պետք է տվյալ ամսում այն իջեցնի մինչև $130,000-ի: Զույգը պետք է տվյալ ամսում իր խնայողությունների գումարն իջեցնի մինչև $195,000-ի:
- Եթե հաստատությունում գտնվող ամուսինը և համայնքում ապրող ամուսինը միասին սեփականություն ունեն, որի ընդհանուր գումարն ամսվա ընթացքում գերազանցում է CSRA-ը՝ պլյուս $130,000, ապա զույգը պետք է հաշվառումից չազատված այդ ընդհանուր սեփականության գումարը կրճատի և դարձնի CSRA-ի չափ՝ պլյուս $130,000, կամ դրանից քիչ, որպեսզի բավարարի սեփականության վերաբերյալ ծրագրի պահանջները: Այդ դեպքում հաստատությունում գտնվող ամուսինն առնվազն **90** օր կունենա (ավելի երկար ժամանակ, եթե դատարանի որոշում է անհրաժեշտ), որպեսզի CSRA-ի մեջ մտնող սեփականությունը փոխանցի համայնքում ապրող ամուսնուն: Դա արվում է, որպեսզի հաստատությունում գտնվող ամուսնու սեփականությունը տեղավորվի սեփականության $130,000 սահմանաչափի մեջ: 2022 թվականի CSRA-ը $137,400 է:

«Medi-Cal»-ի այն դիմորդները, որոնք երկարատև խնամքի հաստատությունում **չեն** գտնվում, կարող են այն օրացուցային ամսում, որում նրանք «Medi-Cal» են ուզում, իրենց նախընտրած եղանակով հաշվառումից չազատված իրենց սեփականությունը կրճատել մինչև սահմանաչափը: Հնարավոր է, որ «Medi-Cal»-ը սեփականության կրճատման ապացույց պահանջի:

Այդ անձինք անիրավունակ **չեն** լինի, քանի որ հաշվառումից չազատված իրենց սեփականությունն արդար շուկայական գնից (FMV) ցածր գնով են փոխանցել, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք սեփականությունը փոխանցելու օրվանից հետո 30 ամսվա ընթացքում տեղափոխվեն հաստատություն:

Հաշվառումից չազատված սեփականությունը FMV-ից ցածր գնով փոխանցելը տվյալ սեփականության սեփականատիրոջ փոփոխություն է, որը կատարվում է տվյալ սեփականության գնից ցածր գնով այն օտարելու, վաճառելու կամ որևէ այլ կերպ փոխանակելու եղանակով:

Կարևոր է. Եթե Դուք դիմում եք որպես հաստատությունում գտնվող անձ կամ մեկը, որը կարող է փոխանցումից հետո 30 ամսվա ընթացքում

հաստատություն փոխադրվել, և Դուք հաշվառումից չազատված սեփականությունը փոխանցում եք FMV-ից ցածր գնով, ապա հնարավոր է, որ Դուք միառժամանակ անիրավունակ լինեք «Medi-Cal»-ի միջոցով խնամքի հաստատության մակարդակի օգնություն ստանալու համար: Ահա, թե ինչ եղանակներով Դուք կարող եք կրճատել անիրավունակության այդ ժամանակահատվածը.

- վճարեք բժշկական ծախսերի համար ներկայացված հաշիվները,
- կահույք գնեք տան համար,
- վճարեք հիպոթեքի պարտքը,
- հագուստ գնեք,
- տունը վերանորոգեք,
- վճարեք մեքենայի վարկը,
- վճարեք այլ պարտքերը,
- սկսեք իրացնել (կանխիկացնել) Ձեր ոչ լիկվիդային ակտիվները, օրինակ՝ ստացեք հարկերից չազատված՝ կյանքի ապահովագրության պայմանագրով նախատեսված կանխիկ գումարը կամ համապատասխան որակավորում ունեցող վաճառամիջնորդի օգնությամբ վաճառքի հանեք սեփականությունը
- վարկ վերցրեք սահմանաչափը գերազանցող սեփականության դիմաց՝ բուժսպասարկման ծախսերը վճարելու համար, կամ Ձեր բժշկական սպասարկողին խնդրեք կալանք դնել այդ սեփականության վրա՝ իր ծառայությունների ծախսերը փակելու համար

Բացառություն. Principe v. Belshé
Այն անձինք, որոնց չի հաջողվել կրճատել սահմանաչափը գերազանցող իրենց սեփականությունը՝ դիմելու ամսվա ընթացքում կամ դրանից հետո եկող որևէ ամսվա ընթացքում՝ դիմումի քննարկման գործընթացի ժամանակ, կարող են հետին թվով (ավելի ուշ) **ծախսելով կրճատել** իրենց սեփականությունը՝ վճարելով ծրագրի պահանջներով վճարման ենթակա բժշկական ծախսերը: Դրանք կարող են ցանկացած ամսվա ծախսեր լինել, բայց չպետք է վճարվեն այն ամսվա ծախսերը, որի ընթացքում սեփականությունը գերազանցել է տվյալ ամսվա սահմանաչափը: Եթե Դուք բավարարեք մնացած չափանիշները, Ձեր իրավունակությունը կհաստատվի՝ այն բանից **հետո**, երբ Դուք սահմանաչափը գերազանցող Ձեր սեփականությամբ վճարեք ծրագրի պահանջներով վճարման ենթակա բժշկական ծախսերը և շրջանին վճարման ապացույց ներկայացնեք:

<u>Հաշվառումից ազատված սեփականության փոխանցումը</u>

Ցանկացած ժամանակ հաշվառումից ազատված (հաշվի չառնվող) սեփականության փոխանցումը պատճառ **չի** դառնա անիրավունակության

ժամանակահատվածի, եթե փոխանցման պահին տվյալ սեփականությունը հաշվառումից ազատված կհամարվեր: Դա ներառում է այն սեփականության փոխանցումը, որն օգտագործվում է որպես տուն կամ նախկին տուն: Տան վաճառքից ստացված գումարը սեփականություն **չի** համարվի, եթե 6 ամսվա ընթացքում այդ գումարը չօգտագործվի մեկ այլ տուն գնելու նպատակով: Հաշվառումից ազատված այլ ունեցվածքի վաճառքից ստացված գումարը կհամարվի սեփականություն:

Հաշվառումից չազատված սեփականության փոխանցումը

Հաստատությունում գտնվող դիմորդը կամ «Medi-Cal»-ի նպաստառուն որը հաստատություն է ընդունվում փոխանցման օրվանից հետո 30 ամսվա ընթացքում, **կարող է** անիրավունակ դառնալ՝ հաշվառումից չազատված սեփականությունը FMV-ից ցածր գնով փոխանցելու պատճառով:

Հաշվառումից չազատված սեփականությունը կարող է փոխանցվել առանց պատճառ դառնալու անիրավունակության ժամանակահատվածի, եթե.

- սեփականությունը փոխանցվում է կնոջը/ամուսնուն (կամ մեկ այլ անձի՝ ամբողջապես կնոջ/ամուսնու օգտին) **կամ**
- սեփականությունը փոխանցվում է հաստատությունում գտնվող անձի երեխային, որը կույր է կամ մշտապես ու ամբողջապես հաշմանդամ **կամ**
- սեփականությունը նախատեսված է եղել FMV-ով փոխանակել դրան հավասար արժեք ունեցող մեկ այլ բանի հետ **կամ**
- սեփականությունը «Medi-Cal»-ի իրավունակություն ստանալու նպատակով չի փոխանցվել **կամ**
- խնամքի հաստատության մակարդակի օգնություն ստանալու անիրավունակության ժամանակահատվածը չափից դուրս մեծ դժվարության պատճառ կհանդիսանա:

Հաշվառումից չազատված նախկին տան փոխանցումը հաջորդ բաժնում նշված որևէ անձի կամ հաշվառումից ազատված սեփականության փոխանցումը ցանկացած անձի պատճառ **չի** դառնա խնամքի հաստատության մակարդակի օգնության հարցում անիրավունակության ժամանակահատվածի, եթե սեփականությունն օտարվել, վաճառվել կամ որևէ այլ կերպ փոխանակվել է FMV-ից ցածր գնով:

Եթե հաշվառումից չազատված նախկին տունը FMV-ից ցածր գնով փոխանցվում է հաջորդ բաժնում նշվածից տարբեր անձանց, կամ հաշվառումից չազատված սեփականությունը փոխանցվում է FMV-ից ցածր գնով, ապա այդ փոխանցումը կարող է պատճառ դառնալ 1-ից մինչև 30

ամիս տևող անիրավունակության ժամանակահատվածի՝ խնամքի հաստատության մակարդակի օգնության հարցում:

Անիրավունակության այդ ժամանակահատվածը հաշվարկվում է սեփականության չփոխհատուցված արժեքը (դոլարով արտահայտված գումարը, որը չի ստացվել) բաժանելով խնամքի մասնավոր հաստատությունում տրամադրվող օգնության՝ նահանգում գործող միջին սակագնի վրա: Մասնավոր օգնության՝ նահանգում գործող միջին սակագինը 2022 թվականին կազմում է ամսական $10,933:

Օրինակ.
Հաստատությունում գտնվող անձը կրճատում է իր սեփականությունը՝ որևէ երեխայի՝ որպես նվեր, փոխանցելով սահմանաչափը գերազանցող $33,000 արժողությամբ իր սեփականությունը: Քանի որ այդ նվերից տվյալ անձն արդար շուկայական գնով ոչինչ չի ստանում, նա իրավունակ **չի** լինի խնամքի հաստատության մակարդակի օգնություն ստանալու: Եթե մասնավոր օգնության՝ նահանգում գործող միջին սակագինը $11,000 է, ապա տվյալ անձը՝ փոխանցման ամսվանից սկսած, երեք ամսով անիրավունակ կլինի խնամքի հաստատության մակարդակի օգնություն ստանալու: Այսինքն՝ $33,000-ը բաժանած $11,000-ի, որը միջին մասնավոր սակագինն է: Բայց այդ անձը կշարունակի իրավունակ լինել «Medi-Cal»-ի մնացած բոլոր ծառայությունների համար:

Հաշվառումից չազատված նախկին տան փոխանցումըհաստատությունում գտնվող անձի կողմից, որը պատճառ չի դառնումանիրավունակության ժամանակահատվածի

Հաշվառումից ազատված տան փոխանցումը անիրավունակության ժամանակահատվածի պատճառ չի դառնում: Հաշվառումից չազատված նախկին տունը նույնպես անիրավունակության ժամանակահատվածի պատճառ չի դառնա, եթե սեփականության իրավունքը փոխանցվում է.

- կնոջը/ամուսնուն **կամ**
- մինչև 21 տարեկան երեխային **կամ**
- երեխային՝ անկախ տարիքից, որը կույր է կամ մշտապես ու ամբողջապես հաշմանդամ **կամ**
- վերը նշված չափանիշները չբավարարող երեխային, որը տվյալ տանն ապրել է երկու տարի՝ հաստատությունում գտնվող անձի ընդունման օրվանից անմիջապես առաջ, և խնամել է տվյալ անձին, որը վերջինիս հնարավորություն է տվել ապրել ոչ թե հաստատությունում այլ տանը **կամ**
- հարազատ եղբորը կամ քրոջը, որը շահաբաժին ունի այդ տանը և

որն այդ տանն ապրել է մեկ տարի՝ հաստատությունում գտնվող անձի հաստատություն ընդունվելու օրվանն անմիջապես նախորդող տարին:

Նախքան խնամքի հաստատության մակարդակի օգնության հարցում անիրավունակության ժամանակահատված սահմանելը՝ շրջանը պետք է որոշի, թե արդյոք դա կարող է չափից դուրս մեծ դժվարության պատճառ հանդիսանալ: Երբ փոխանցումը պատճառ է դառնում անիրավունակության ժամանակահատվածի, անիրավունակ անձն իրավունք ունի անկողմնակալ դատալսման միջոցով բողոքարկելու այդ որոշումը: Բողոքարկման ձևաթուղթն այն «Որոշման մասին ծանուցման» դարձերեսին է, որով դադարեցվում, մերժվում կամ սահմանափակվում է իրավունակությունը: